Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր կյուրին համայնքի ավագանու
2016 թ. դեկտեմբերի «6» -ի
թիվ 39-Ն որոշման

Համայնքի ղեկավար՝ Գ. Օհանյան

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ/ սույն կետի <ա> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1.000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

բգ/ 1001ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով

սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 90.000 դրամ:

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 90.000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.000 դրամ
գ/ խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60.000 դրամ :

գա/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:.

10 . Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

12. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

13. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2.500 դրամ

14. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3.000 դրամ

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փափախող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Խ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել օրակարգը

1. ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

12/5/2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Նոր Կյուրին համայնքի բյուջեի եկամտային մասից՝ մասնավորապես հողի հարկ ֆիզ անձանցից և գույքահարկ ֆիզ անձանցից հոդվածներից պակասեցնել համապատասխանաբար 150.0 հազ. դրամ և 550.0 հազ. դրամ՝ ի հաշիվ բյուջեի 11-1-2-ի 4891 պահուստային միջոցներ հոդվածի՝ քանզի համայնքի հարկ վճարողների որոշ մասը բացակայում են Հայաստանի Հանրապետությունից , ինչը վերջիններիցս հարկերի գանձումը անհնար է դարձնում :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

12/5/2016

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39-Ն

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Նոր Կյուրին համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ` համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

12/5/2016

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել օրակարգը՝

1. ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41-Ն

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները .

1. Բյուջեի 01-1-1՝ օրենսդիր և գործադիր մարմինների 4212 էներգետիկ ծառայություններ հոդվածին ավելացնել 47.0 հազ դրամ , 4215 ապահովագրական ծախսեր հոդվածին՝ 64.0 հազ. դրամով , 4251 հոդվածին՝ 280.0 հազ. դրամով . 4232 համակարգչային ծառայություններ հոդվածին՝6.0 հազ. դրամ՝ ի հաիիվ 11-1-2՝ պահուստային ֆոնդի 4891՝ պահուստային միջոցներ հոդվածի:

2. 01.1.1՝ օրենսդիր և գործադիր մարմիններ:ի 4213 կոմունալ ծախսեր հոդվածը պակասեցնել 20.0 հազ. դրամով , 4241 հոդվածը պակասեցնել 70.0 հազ. դրամով , 4264 հոդվածը՝ 200.0 հազ. դրամով և նշված գումարներն ավելացնել 01-1-1-ի 4212 հոդվածին:

3. 01-6--1՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների 4239 ՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածը պակասեցնել 68.0 հազ. դրամով և նշված գումարներն ավել, և նշված գումարն ուղղել ուղղել 01-1-1՝ օրենսդիր և գործադիր մարմինների 4212 հոդվածին :

4. 04-2-1՝ գյուղատնտեսություն , անտառային տնտեսություն , ձկնորսություն և որսորդություն 4239 ՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածից

պակասեցնել 40.0 հազ. դրամ , որն ուղղել 01-1-1՝ օրենսդիր և գործադիր մարմինների 4212 հոդվածին :5. 08-2-3 ՝ մշակույթի տներ , ակումբներ , կենրոններ 4727 սպորտային նպաստներ հոդվածը պակասեցնել 40.0 հազ. դրամով , որից 7.0 հազ. դրամն ուղղել 01-1-1՝ օրենսդիր և գործադիր մարմինների 4212 հոդվածին , իսկ 33.0 հազ. դրամն ուղղել 11-1-2 ՝ պահուստային ֆոնդի 4891՝ պահուստային միջոցներ հոդվածին:

6. 10.7-1 -ի 4726 հոդվածը պակասեցնել 50.0 հազ. դրամով , իսկ 4729 հոդվածը պակասեցնել 210.0 հազ. դրամով , որն ուղղել 01-1-1՝ օրենսդիր և գործադիր մարմինների 4212 հոդվածին :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 42

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ , ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ , ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել 2017 թվականի համար համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և հաստիքային դրույքաչափերը .

Աշխատակիցների թվաքանակը՝ 12
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը / ՀՀ դրամ /
Համայնքի ղեկավար		258.000
Համայնքային ծառայության պաշտոններ		
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2 /	1.0	206.000
համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1 /	1.0	205.000

համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/	1.0	201.000
Մանկապարտեզ		
Մանկապարտեզի տնօրեն	1.0	100.000
Մանկապարտեզի դաստիարակ	1.25	102.000
Մանկապարտեզի դայակ	1.1	80.300
Մանկապարտեզի խոհարար	1.0	74.000
Մանկապարտեզի հաշվապահ	0.5	74.000
Մանկապարտեզի եր. ուսուցիչ	0.25	81.000
Սպասարկման աշխատակազմ		
համայնքապետարանի հավաքարար		74.000
Համայնքի աղբահանող վարորդ		100.000

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ

4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ